

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	
ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵՍԻԱՆ Հ. Ն. — Հայոց կղզիին 250ամեակը (1717-1967), Զ.	89
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
ԱՆԱՆԵՍԻԱՆ Հ. ՊՕՂՈՍ. — Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի (Շար. 15)	95
ԶՐԱՔԵԱՆ Հ. ՔԵՐՈՒՆԻ. — Դանիել Վ. ի Ասորոյ «Մեկնութիւն Սաղմոսաց Դարի» (Շար. 7)	104
ՂԱԶԻԿԵԱՆ Հ. ԱՐՄԷՆ Ղ. — Յուդայի ճեղքագրաց Ղալաթիոյ Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ — Հրտ. Յ. Քիւրտեան (Շար. եւ վերջ)	108
ԱՆԴՐԵԱՍԵՍԻԱՆ ԱՐԱՄ ՃՐԱՄ. — Պոլսոյ Սկիւռայի Աւետարանին յիշատակարանները	116
ԼԵԶՈՒԱԿԱՆ	
ՄԵԽԻԹԱՐԵԱՆ ՅԱԿՈԲ Մ. — Արքայաշէյր Միւսի-բար Սեբաստացու շարահիւսական ըմբռնումները (Շար. 5)	120
ԳՐԱԿԱՆ	
Կ. Վ. — «Հայաստան» եւ «Հայ» անուններու յիշատակութիւնը՝ Հռոմայեցի քանդակարտ Բաբուրեանի փոխ (Շար. եւ վերջ)	129
ՇԻՐԱԶ ՅՈՎՀԱՆՆԵՍ. — Քառեակներ (Շար.)	158
ՀՆԱԽՕՍՍԱԿԱՆ	
ԱՐԱԿԵԼԵԱՆ Բ. — Epigrafi latine nella Capitale Artasat	135
ԳԵՂԱՐՈՒԵՍ	
ԵՐԵՄԵԱՆ ԱՐԱՄ. — Գորգագործութեան արուեստը Չարմահալում (Շար. եւ վերջ)	140
ԿՐՕՆԱԿԱՆ	
ԶԵՔԻԱՆ Հ. ԼԵՈՆ. — Արդի քաղաքակրթութիւնը եւ եկեղեցին (Շար. 5)	144
ՄԱՀԱԳՐԱԿԱՆ	
ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵՍԻԱՆ Հ. Ն. — Զոյգ վաստակաւորներու յիշատակին (Հ. Վ. Ինգլիզեանի եւ Հ. Ն. Ոսկեանի մահուան առիթով)	151
ԳՐԱԽՕՍՍԱԿԱՆ	
ՊԶՏԻԿԵԱՆ Հ. ՅԱՐՈՒԹԻՒՆ. — «Հայկական Մանրանկարչութիւն» (Երեւան, Հայաստան Հրտ. 1967)	162
Կ. Վ. — LUDOVICO DI BREME, <i>Lettere</i> , a cura di P. Camporesi, Torino, 1966	166
Կ. Վ. — GIAN PIERO LUCINI, <i>Lettere a Hrand Nazariantz</i> , In «Graal», Bari, 1967, settembre	167
Կ. Վ. — VITTORIA AGANOOR, <i>Lettere a Domenico Gnoli</i> , a cura di B. Marniti, Roma, 1967	167

SOMMAIRE

	PAGE
ARTICLE DE FOND	
DER-NERSESSIAN P. N. — Le 250ème anniversaire de l'Ile des Arméniens: 1717-1967 (Suite)	89
PHILOLOGIE	
ANANIAN P. PAUL. — La vie de St. Mesrop (Suite)	95
TCHERAKIAN P. CHERUBIN. — «Exégèse des Psaumes» de Daniel le Syrien (Suite)	104
GHAZIKIAN P. ARSENE GH. — Catalogue de manuscrits arméniens de l'Eglise St. Grégoire Loussavoritch de Galata (Suite et fin)	108
ANDREASSIAN ARAM Ing. — Les colophons de l'Evangile de Skevra	116
LINGUISTIQUE	
MEKHITHARIAN HAKOB M. — Les idées syntaxiques de l'Abbé Mekhithar de Sébaste (Suite)	120
LITTÉRATURE	
G. V. — Citations des noms «Arménie» et «Arménien» chez quelques poètes romains (Suite et fin)	129
CHIRAZ HOVHANNES. — Quatrains	158
ARCHEOLOGIE	
ARAKELEAN B. — Epigraphes latines dans la Capitale Artasat	135
BEAUX ARTS	
YEREMIAN ARAM. — La fabrication des tapis à Tcharmahal (Suite et fin)	140
RELIGION	
ZEKIYAN P. LEON. — La civilisation moderne et l'Eglise (Suite)	144
NECROLOGIE	
DER-NERSESSIAN P. N. — En mémoire des Pères Ingilizian et Oskian	151
RECENSIONS	
BEZDIKIAN P. HAROUTHIAN. — «Miniature arménienne», (Erivan, 1967)	162
G. V. — LUDOVICO DI BREME, <i>Lettere</i> , par P. Camporesi, Turin, 1966	166
G. V. — GIAN PIERO LUCINI, <i>Lettere a Hrand Nazariantz</i> , En «Graal», Bari, 1967 Septembre	167
G. V. — VITTORIA AGANOOR, <i>Lettere a Domenico Gnoli</i> , par B. Marniti, Rome, 1967	167



ՅԻՇԱՏԱԿԻ ԽՈՀԵՐ

ՀԱՅՈՑ ԿՂԶԻՒՆ 250ԱՄԵԱԿԸ
(1717 - 1967)

Զ.

Մերիկէն ետք՝ պայծառ երկինք, պատերազմէն յետոյ՝ խաղաղութիւն եւ զործօն եռուղեւ: Կը թեւակոխենք Ս. Ղազարի պատմութեան հիմնարար շրջանը, որ կ'երկարի եւրոպական մեծ պատերազմի զինադադարէն մինչեւ երկրորդ աշխարհամարտի աւարտը (1919-1945). քաղաքականօրէն, նախ՝ քառամեայ անդորր շրջան մըն է, որ ծայր կու տայ, իտալիոյ մէջ՝ Մուսոլինեան վարչակարգի տիրապետութեամբ բնորոշուած. վանքին համար վերածաղկումի եւ վերանորոգ կազմակերպութեան հորիզոն մը կը բացուի, հակառակ պատերազմին հետեւանքով ստեղծուած տնտեսական տխուր պայմաններուն:

Գրպժ. Իգնատիոս Արքեպ. Կիւրեղեան Արքեպ. մահը կու գայ առաջին էջը գրաւելու այս նոր շրջանին: 1921ի Դեկտեմբերին՝ Միաբանութիւնը կը կորսնցնէ իր 89ամեայ պատկառելի Արքեպ. Ս. Ղազար, որ վերջին տարիներուն, հիւանդութեան եւ

տարիքի բերումով, առանձնացած էր վանքին ամառանոցը: Հինաւուրց դիւցազի նման կը մարէր վաստակաւոր Արքեպ. Ս. Ղազարի նոր սերունդին կրօնական վեհաշունչ ոգին լուսեւորած նախնիքներուն: Եւ արդար ու շինարար Հայրիկին մահը կը դառնար խոստովանալից արշալոյս վերածաղկումի:

Միաբանութեան վարչական կազմը եւ սահմանադրական օրէնքները քննումի ենթարկուած էին այս շրջանին, ու մինչեւ նոր կարգադրութիւն կամ տնօրինում թափուր կը մնայ արքայական աթոռը, եւ ժամանակ մը՝ վանքը կը կառավարուի Ընդհ. Աթոռակալով:

Մինչ այդ, 1919ի աշունէն իսկ սկսած, երամ երամ Ս. Ղազար կը հասնէին նորանոր ընծայացու պատանիներ, ընդհանրապէս Պոլսէն. մարտիրոսներու զաւակներ էին անոնք, որոնց ծնողները Տրապիզոնի, Էնկիւրիի, Կեմերեկի, Կուտի-նայի, Սարրերգի, Մարաշի ու Մարտինի

չըջաններուն մէջ խժոժօրէն նահատակուած էին դաժան կացիւններէ. բայց անոնց արիւնը հաւատքի կայծ էր դարձած, որ պիտի բռնկէր Ս. Ղազարի մէջ, Միաբանութեան ընծայելով նոր յոյսեր, նոր յաջողութիւններ. այսօրուան վաստակաւոր միաբաններէն պատկառելի թիւ մը, այժմ վաթսնամեակի սեմին վրայ:

Իսկոյն կը կազմակերպուէր վանքին նորընծայարանը, կը բարեկարգուէին մեծ ու փոքրիկ ժառանգաւորներու ուսումնական կրթութեան ծրագրերը, կը նորոգուէին մինչեւ անգամ արձանագրութեան տոմարները, դասացուցակները. նոր խանդ եւ աւելն կը մտնէր վանքին մէջ՝ պատերազմի ահարկու եւ մենացեալ տխրութենէն ետք:

1922ին Ս. Ղազար կը հասնէր նաեւ երիտասարդ վարդապետներու նոր շարք մը, համալսարանական փայլուն վկայականներով օժտուած. թարմ ոյժեր, որոնք Միսիթարեան դպրոցի օրերէն, 1916էն ասպիւն, Հոռոմի մէջ ոսկեղէն մրցանակներ էին շահած՝ իմաստասիրական եւ աստուածաբանական ճիւղերուն մէջ. այս գիտութիւններուն համընթաց, հայագիտական մեծ պաշարով հմտացած, անոնք այժմ վանք կը վերադառնային, ծաղկեցնելու Ս. Ղազարի մշակութային, կրթական եւ հրատարակչական գործունէութիւնը:

Հայկական հրատարակութիւններու եւ մանաւանդ մամուլի յարաճուն պահանջներուն ընդառաջելով, գրադարանային նոր կարգադրութիւններ եւ ցուցակագրումներ տեղի կ'ունենան, ցանկադարաններու նոր յարմարեցումներ կը ստեղծուին, անխոնջ ջանքերով լուսահոգի Հ. Եղիա Վրդ. Փէչիկեանի, որուն խանդավառօրէն կ'աջակցին վանքի աւագ դասաւանդներու աշակերտները:

Հ. Արսէն Ղազարեան կոչ կ'ուղղէ համայն սփիւռքին, իր կորսուած Մատենագիտութեան յարութիւն տալու տիտանային ծրագրով. եւ Ս. Ղազար կը խուժեն հազարաւոր հատորներ, ամսաթերթերու պակաս թիւեր: Հայաստանէն, մանա-

ւանդ Խանջեանի վարչութեան օրով, սրն-տուկներով կը հասնին զրքեր ու թերթեր:

1926ին Ս. Ղազար կ'օժտուի Եպիսկոպ Արթին Փաշա Չրաքեանի 3.000 հատորնոց ձոխ գրադարանով, որ կու գայ հարստացնել վանքի մատենադարանին արեւելագիտական բաժինը. թանկարժէք ու զեղակազմ այդ զրքերուն կը յատկացուի Լորտ Պայրընի սենեակը եւ անոր յարակից խուցը, միասնաբար ընդլայնուած, ուր կը զետեղուին նրբաճաշակ նոր դարակներ, նուիրատուութեամբ Արթին Փաշայի կրտսեր եղբոր՝ Յովսէփ Արթին Պէյ Չրաքեանի:

Այդ տարին կը զուգադիպէր նաեւ մեծն Միսիթարի ծննդեան 250ամեակը եւ վանքի նորընծայարանի շինութեան 200ամեակը, որոնք ներքին զեղեցիկ հանդէսներով խանդավառօրէն կը տօնուին:

Երեցագոյններու սերունդէն Հ. Արսէն Ղազարեան, Հ. Վարդան Հացունի, Հ. Ղեւոնդ Տայեան անխոնջ կ'արտադրեն, կը վերլուծեն հայ լեզուի դպրոցները, կը թարգմանեն գլուխ-գործոցներ, կը լուսարանեն հնախօսական բազմադիմի արժէքներ, կը պեղեն դիւաններ, լոյսի ջահը փոխանցելով նորերուն:

Հ. Արսէն Ղազարեան, 1919-1933ի շրջանին կ'արտադրէ 21 հատոր. իսկ Հ. Վարդան Հացունի կը հրատարակէ 11 հատոր:

Շինարարական նշանակելի մեծ ձեռնարկներ տեղի չեն ունենար այս շրջանին՝ վանքին մէջ:

Միաբանութիւնը ժամանակի պահանջներուն ստիպումով՝ որբերու խնամակալութեան դատին կը նուիրուի, տնտեսական մեծամեծ զոհողութիւններով, ի նըպաստ աղբին դաւակներուն. նախ Տրապիզոն (1916), ապա Քաղկեդոն (1918), յետոյ Ֆիեսոյ՝ վանքին նախկին ամբարանոցը (1922), հոսկ Միլանի մէջ (մինչեւ 1933) կը կազմակերպուին որբանոց-վարժարաններ, ուր կ'աշխատին բազմաթիւ միաբաններ:

1927ին, կը կազմակերպուի Հոռոմի Մը-խիթարեան Վանատունը, վանքի համա-

լըսարանական ուսանողներուն համար, նորակառոյց շէնք մը գնելով՝ Աւենտինեան խաղաղ շրջանակին մէջ: Ուսանողարանը քանի մը տարի է Վեր ունէր նաեւ սեփական ամբարանոց՝ Սարինայի բարձունքներուն վրայ:

Լիտուի մէջ ու Վենետիկի շրջակայքն ալ, մինչեւ Ազոլոյ, պետական օրէնքներու հարկին տակ, նշանակելի ծախսեր կը կատարուին, նոր շէնքերու կառուցումով եւ վերանորոգումի անհրաժեշտ աշխատանքներով, թէ՛ հողային գրաւումներէ զերծ մնալու նպատակով, եւ թէ՛ վանքին համար հասութարեր կալուածներ ստեղծելու մտադրութեամբ: Կը գնուի նաեւ մեծ շէնք մը, Պուտափեշտի մէջ, անոր եկամուտները յատկացնելու համար կըրթական յարաճուն ձեռնարկներուն:

1928ին - նկատելով Ֆրանսա հաստատուող հայ դպրականներու բազմութիւնը - հարկ կը տեսնուի վերաբանալ Փարիզի Մուրատեան Վարժարանը, որ 1870էն ի վեր միացած էր Վենետիկի Ռափայէլեանին, ու կը գնուի նոր շէնք՝ Սեւրի մէջ:


1929ին Միաբանութիւնը կ'ունենայ իր նորընտիր Արքահայրը՝ յանձին Գրյ. Հ. Յովհան Վրդ. Աւգերի:

Դպրոցական եւ այլ կարգի անհրաժեշտ ձեռնարկները, որոնք կատարուած էին տնտեսական շատ անպաստ պայմաններու տակ, գահավիժօրէն կը տկարացնէին Միաբանութեան մատակարարութիւնը, ու վանքը նիւթական չափազանց անձուկ պայմաններու մէջ՝ ճգնաժամային շրջան մը կու գար անցընել:

Միաբանութիւնը հազիւ կարող էր պահել իր յաջորդներու ապահովութիւնը. եւ սակայն, ազգին կարօտութիւններուն ընդառաջ երթալով՝ կը սպառէր իր ոյժերը եւ ինքզինքը:

Այնուհանդերձ, մշակութային գծով՝ անպակաս են նոր ձեռնարկներ, ու գնահատելի աշխատանք կը թափուի հեւ ի հեւ:

«Գեղունի»ի նոր հատոր մը, ամբողջապէս նուիրուած հայ գեղարուեստին (1927), խանդավառ ընդունելութիւն կը գտնէ. փրկագործութեան ԺԹ. դարադարձին (1933), Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան 1500 ամեակին (1935), ինչպէս նաեւ Մուրատ-Ռափայէլեան վարժարաններու 100ամեակի (1936) զեղեցիկ առիթներով՝ կը կազմակերպուին համազգային հանդէսներ ու լոյս կը տեսնեն «Բազմավէպ»ի արժէքաւոր բա-



Ս. Ղազար կղզին՝ 1935ին, տեսնուած հիւսիս-արեւմուտէն

ցառիկներ. վանքին պաշտօնաթերթը իր ամենաբեղուն շրջաններէն մէկը կ'ապրի այդ օրերուն:

1935ին Արբաճայր կ'ընտրուի Գրպժ. Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան, որու օրով, նախ՝ մեծ ջանք կը թափուի, վրձնական միջոցներու դործադրութեամբ, յաղթահարելու տնտեսական մտահոգիչ դժուարութիւնները: Այնուհետեւ նոր թափ կ'առնէ կրթական դործունէութիւնը. 1936ին կը բացուին Աղեքսանդրիոյ եւ Հալէպի Միթրեան վարժարանները. 1938ին Ատտիս-Ապեպայի վարժարանը՝ Մուսուլիսեան կառավարութեան նպաստներով. վանքէն դէպի Արեւելք կը դիմեն բազմաթիւ միաբաններ:

Ինչպէս յայտնի կը նշմարուի, ամբողջ այս շրջանին (1919-1939) ղեկավարող զարկ կը տրուի կրթական ու դպրոցական դործունէութեան եւ մշակութային ձեռնարկներու. այս վերջինին պիտի դայ նըպաստել հնդկահայ մեծ բարերար Հրամանատար Ասպետ Պետրոս Հայրապետ Կրէտի կտակը (1940):

Վանքին մէջ, հայկական հնութիւններու փոքրիկ թանգարան - սենեակ մը կը յարգարուի՝ Տիար Պողոս Իսպէնեանի նուիրատուութիւններով ու ճաշակով (1937): Տպարանը կ'ունենայ իր առաջին տողաշար մեքենան՝ Ամերիկահայ բարերարներու օրհնեալ ջանքերով (1938):

1919էն ստղին Միաբանութիւնը 24 նոր անդամներ արձանագրած էր իր շարքերուն մէջ, որոնք քահանայական օծութեամբ օժտուած, կը դործէին զանազան ասպարէզներու մէջ. ունէր 10 ուխտեալ երիտասարդներ եւ քսանի հասնող ընծայացու պատանիներ (1939):

Յուսադրիչ այսպիսի պայմաններու տակ, յանկարծ կը պայթի եւրոպական երկրորդ պատերազմը, որուն մէջ պիտի գլորի Խալիլի ալ (1940), եւ մահասարսուտ հրդեհը պիտի ճարակի համայն աշխարհի մէջ. սարսափի ու տազնապի անմոռանալի օրեր...:

Պատերազմի առաջին երեք տարիներուն՝ համեմատաբար խաղաղ օրեր կ'ան-

ցընէ վանքը, Վենետիկի աշխարհադրական դիրքին ու դեղարուեստական նկարագրին շնորհիւ:

Սակայն, հետզհետէ կը դժուարանան ասպրուտի միջոցները. արեւելքի ճամբաներու փակումով՝ կը դադրին հազարաւորութիւնները արտասահմանի վարժարաններուն եւ վարդապետներուն հետ. կը նուազին նոր կոչումները. մանաւանդ 1943ի Սեպտեմբեր 8էն ետք, քաղաքական վերիվայրումներու եւ իրերայաջորդ դանազան կառավարութիւններու եւ դրաւումներու շրջանին, վանքին համար կը ստեղծուի մտահոգիչ կացութիւն:

Ս. Ղազարի մէջ, քանի մը տեղեր կը կառուցուին փոքրիկ ասպատանարաններ, օգային յարձակումներու ժամանակ՝ հոն պատսպարուելու նպատակով. աւագէ պարկերով սլառեր կը բարձրանան ասդին անդին՝ պաշտպանելու համար կամարներ ու շէնքեր. վարդապետներուն մեծամասնութիւնն ու սակաւաթիւ աշակերտութիւնը կը փոխադրուին Ս. Զենոն դիւղը, Վենետիկէն 75 հազարամեղր հեռու, Կրափիա լեռան ստորոտը. անքոյթ վայրեր կը տարուին եկեղեցական թանկարժէք սպասներն ու դեպոստները. ամենամեծ խնամքով, ամուր ու մասնաւոր սնտուկներու մէջ, կը փոխադրուին նաեւ - զինուորական հսկողութեան տակ - հայկական բոլոր ձեռագիրներն ու թանկարանային արժէքները, եւ կը զետեղուին դեռնափոր չոր ասպատանարաններու մէջ, վարդապետներու դուրդուրոտ խնամքին ու պաշտպանութեան տակ: Ազոլոյ փոխադրուած է նաեւ Մուրատ-Ռափայէլեանի աշակերտութիւնը, ուր կը շարունակուին դասընթացները:

Ս. Ղազար կ'ամայանայ (1943-1945). մինչեւ իսկ եկեղեցւոյ դեղակառոյց որմերէն վար կ'իջնեն Ս. Սահակ ու Մեսրոպ եւ այլ նկարներ, երկներանդ դարդեր ու ապակիներ:

Վենետիկի մերձակայ դործատուները ոմբակոծումի կ'ենթարկուին. նաեւ օդ կը ցատկեն. ահաւոր պայթումներէն ջարդուիչուր կ'ըլլան վանքի եւ դպրոցի

պատուհաններու ապակիները: Ոչ մէկ վնաս չէնքերուն:

Գոնէ տարանը անդործ չպահելու նըպատակով, վանքի սենեակներէն պատկերներու ապակիները կը հանուին՝ տըպարանի պատուհանները դարմանելու համար: Զմեռը շատ ցուրտ կ'ընէ այդ տարին:

Բայց Տիրամայրը երկնքէն կը հսկէ իր որդիներուն վրայ, եւ հզօր հովանի կ'ըլլար իր վանքին ու վարդապետներուն: Արդարեւ, իտալական դանազան կառավարութիւններու շրջանին, յեղափոխական շարժումներու ընթացքին, ինչպէս նաեւ գերման տիրապետութեան ժամանակ, Ս. Ղազարի վանքն ու Միթրեան վարդապետները, ինչպէս նաեւ Մուրատ-Ռափայէլեանի Տեսչութիւնն ու աշակերտները, միշտ մեծ յարգանք ու պաշտպանութիւն կը վայելէն օրուան գերագոյն իշխանութիւններէն. թէպէտ բուռնադրամի փոքրիկ փորձեր կը կատարուին Ազոլոյ եւ Ս. Զենոն, սակայն վարդապետներու հնարամիտ ջանքերով՝ բացառիկ արտօնութիւններ ձեռք կը բերուին, ու Միաբանութիւնը միշտ գերծ կը մնայ ամէն կործանարար արհաւիրքներէ:

Կեանքը կը դժուարանայ նաեւ դիւղերուն մէջ, Մուրատ-Ռափայէլեանի եւ վանքի սակաւաթիւ աշակերտներու ասպրուտի հարցը մտահոգիչ կը դառնայ. ամէն ինչ պարենատոմսով պէտք է հայթայթել. հարկ կ'ըլլայ օրերով թափառել դիւղերէ դիւղ, ուտեստեղէն ձարելու նըպատակով. հսկայ ու աննման դոհողութիւններու կը ձեռնարկեն՝ այդ օրերուն՝ մատակարարութեան նուիրուած Հայրերը, եւ Աստուծոյ օրհնութեամբ՝ բարիքները անպակաս կ'ըլլան սեղանէն:

Պատերազմի այդ ահաւոր օրերուն, դիւղի լուծեան մէջ, դրական կեանք մըն ալ կը կազմակերպուի. Արբաճայրն ինք կը նուիրուի Աւետարանի աշխարհաբար թարգմանութեան գործին, Ընդհ. Աթոռակալ Հ. Ղեւոնդ Վրդ. Տայեան՝ էջ առ էջ կը յառաջանայ շարականներու ձայնադրութեան աշխատանքին մէջ, երիտա-

սարդ վարդապետներու ժիր խումբ մը կը ձեռնարկէ բառարանային աշխատանքներու եւ դպրոցական «Սեւան» ընթերցարաններու կազմութեան, ուրիշներ «Գրական ցովքեր» շարքերու պատրաստութեան. եւ պատերազմի իսկ օրերուն՝ ծայր կու տան անոնց հրատարակութիւնները, արդէն իսկ զինադադարի եւ խաղաղութեան յոյսերով գեղուն եւ մօտիկ ասպաղայի աշխատանքին լծուելու պատրաստակամութեամբ:

Վանական օրինակելի օրակարգ մը կ'ապրին միաբանները, այդ օրերուն՝ դիւղին մէջ, կանոնաւոր ժամերգութիւններով եւ հասարակաց պաշտամունքներով. մեծ տօներու թափօրներուն՝ դիւղի ժողովուրդն ալ յուզումով կը մասնակցի Հայոց աղօթքներուն:

Ճգնաժամային օրերը կը մօտենան. ահա ուղողի օրեր կ'անցնեն Միթրեան Հայրերը 1945ի Ապրիլ ու Մայիս ամիսներուն. գերման բանակները կը նահանջեն, իտալացի ազատատենչ յեղափոխականները կը տիրեն, նախկին կուսակցականները կը սպառնան, կը ժամանեն անդլեամերիկեան հրասայները. քառսային օրեր. դիւղի խաղաղութիւնն ալ կը վերդովի. դիւղացիներէն շատեր, վտանգի պահուն, Հայոց այդին կ'ապաստանին. թնդանօթները կը դռան եւ ումբերը կ'անցնին մեր շէնքերուն վրայէն. հրացանի եւ գնդացիի որոտը կը հնչէ մօտէն. դիւղն ալ իր դոհերը կու տայ...:

Պայթումները հետզհետէ կը հեռանան. փոթորիկը կ'անցնի. եւ ահա կը ծածանի խաղաղութեան դրօշը, ուրախութեան զանգերը կը հնչեն դիւղէ դիւղ. լուրեր կը հասնին վանքէն, Հոռմէն, Փարիզէն, Արեւելքէն. ուրախութեան եւ շնորհակալութեան օրեր են համայն Խալիլոյ համար, յատկապէս մեղի՝ Միթրեարի որդիներու համար: Ս. Ղազար չունի դոհեր եւ նշանակելի կորուստներ: Փրկուած են մանաւանդ ձեռագիրները, գրադարանը, դիւանը, թանգարանը:

Ամիս մը չանցած, տաժանադին ճամբորդութեամբ դիւղ կը հասնի Հոռմի

ուխտեալ մեր համալսարանական աշակերտներու խումբը, իրենց Մեծաւորներով ու հոն պաշտօնավարող միաբաններով. երկու տարիէ ի վեր իրարմէ բոլորովին բաժնուած մնալէ ետք, պատերազմի կրակէն ու ռումբերէն ձողողւած, յուղումով կը հանդիպէին իրարու Արբա-հայրն ու որդիները կարօտադին:

Միաբանութեան կողմէ շնորհակալութեան օր կը յայտարարուի 1945ի Սեպտեմբեր 8ը եւ պատրաստութիւններ կը տեսնուին Ս. Ղազար փոխադրուելու: Տիրապետող անդլեւամերիկեան զինուորական ոյժերու կողմէ տրամադրուած մասնաւոր ինքնաշարժներով բոլորս կը հասնինք վանք. բացառիկ երեւոյթ մըն էր Ս. Ղազարի քարափին չուան նետած հրակայ լաստանաւը, որուն վրայ կանգուն մեր բեռնակառք ինքնաշարժը ցոլք կը նետէր կապոյտ ջուրերուն մէջ: Արցունքով կ'ողջագուրուինք վանքի պահապան քաջարի վարդապետներուն հետ, որոնք հետաքրքրութեամբ քարափ փութացած են այս անակնկալ ու տարօրինակ երեւոյթը նկատելու. ինքնաշարժ մը՝ վանքի քարափին: Կը համբուրենք կարօտով վանքի կարմիր որմերը, Մխիթարի երկղարեան շիրիմը եւ տունը սրբազան:

Ս. Ղազար, Սահակ ու Մեսրոպ դարձեալ իրենց պատուոյ դիրքերն են դրաւած՝ վանքի մայր տաճարին խորանին շուրջ. կը մատուցուի դոհարանական սուրբ պատարագը: Վեց տարի առաջ, պատերազմի հռչակումի տխուր օրը, այնտեղ ծնրադիր, Կոմիտասեան «Տէր ողորմեա»ով աշխարհի խաղաղութիւնն էինք խնդրած եւ որդեգրութեան մեր ուխտը կատարած. այնուհետեւ նոյն պաղատական արարողութիւնը կրկնած էինք ամէն օր, երեկոյեան ժամերգութենէն ետք, նոյնիսկ երբ կարօտով հեռացանք վանքէն:

Մխիթարի որդիները՝ կարծէք՝ Մեթոնի պատերազմէն է որ ազատած, դար-

ձեալ կ'ապաստանէին Ս. Ղազար, «Պահպանիչ որդեգրաց» Տիրամօր քաղցր հովանիին տակ:

Այդ օրը, սակայն, բոլորիս դարմանքը մեծ եղաւ, երբ Ս. Ղազարի մէջ հանդիպեցանք յիսունէ աւելի դադթական հայ ընտանիքներու, որոնք պատերազմի կըրակներէն ազատած՝ հասեր էին Վանետիկ: Միաբանութիւնը Լիտուի մէջ չէնք մը տրամադրած էր անոնց, ինչպէս նաեւ Մուրատ-Ռափայէլեան Վարժարանի մէջ ինչ ինչ յարկարաժիններ, եւ հայրարար խնամք կը տանէր մեղմելու անոնց վիշտն ու նիւթական կարօտութիւնները:

Աչուներ կը մօտենար. բայց Ս. Ղազարի վանականներու սրտին մէջ աչուներն ու ձըմեռը անցած էր. դարուն կը ծաղկէր, յոյսով զեղուն, վերանորոգումի աշխատանքին լծուելու սրտեռանդն տենէրով:

Ս. Ղազար չունէր աշակերտ. նորընծայարանը՝ թէեւ իբր չէնք չէր կրած ծանր վնասներ, սակայն ապակիներն էին ջարդուիչուր. վառելանիւթի չզոյլութենէն, խոնաւութիւնը բոյն դրած էր ամէնուրեք: Աշխատանքի ժամը կը հնչէր Մխիթարի որդիներուն համար, վերածաղկեցնելու այդ նուիրական յարկերը:

1945ի Նոյեմբերի վերջերը, շնորհաբեր ցօղի նման Մխիթարեան մայրավանքին վրայ կ'իջնէր աստուածաւանդ օրհնութիւնը Ամենապատիւ Տ. Տ. Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեան Կաթողիկոս-Պատրիարքին, որ կու գար Ս. Ղազար, իր այցելութեամբ սիրովելու եւ քաջալերելու Մխիթարի զաւակները: Հանդէսներ եւ ընդունելութիւններ կը սարքուէին ու կը ստեղծուէր խանդավառ մթնոլորտ, կարծէք ջնջելով ի սպառ պատերազմին աղէտները, յուսատու արշալոյսին ակնկալութեամբ:

(Շար. 6)

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

ՎԱՐՔ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ

2.

ՄԱՇՏՈՅԻ ՄԱՋԸ

ԵՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՃՇՏՈՒՄՆԵՐ

(Շար. տե'ս «Բազմավէպ» 1967, ք. 11-12, էջ 243)

Ս. ՍԱՀԱԿԻ ՄԱՋԸ ԵՒ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

Կորիւն՝ իր վարդապետին վարքը փակելէ առաջ՝ կը յիշէ Ս. Սահակի մահը, անոր հետ կապելու համար Ս. Մեսրոպինը. եւ այնպիսի մանրամասնութիւններ կու տայ անոնց մահուան նկարագրութեան մէջ, որ կը յայտնէ թէ ինք անձամբ ներկայ եղած է, թէեւ իր դրուածութեան ընթացքին՝ առաջին դէմքը չի դրածաճեր. «Յետ այնորիկ, կը գրէ ան, դէպ ինչէր նովին ճամարտութեամբ երանելոյն Սահակայ, լցեալ աւուրբք, երկայն ժամանակօք եւ վայելչացեալ աստուածաբեր պաղտոյն բարութեամբք, յառաջնում ամի Յաղկերտի, որդւոյ Վառձայ՝ թաղաւորի կացելոյ ի Պարսից աշխարհին, ի Բաղրեւանդ դաւառի, ի դիւղն Բլրոցաց, ի կատարել ամսեանն Նաւասարդի, որպէս եւ զօր ծննդեանն երանելոյն յիշէին, յերկրորդ ժամու աւուրն, ի պաշտաման անուշահոտ իւղոյն, հանդերձ աստուածահաճոյ աղօթիւք ծերունւոյն, ի Քրիստոս աւանդել զհոգին, հայեցեալ ի բան մարդարէին որ ասէր. ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ. եւ Ստեփանոսի երանելոյ՝ որ ասէր. Տէր Յիսուս, ընկալ զհոգի իմ: Ըստ նմին օրինակի եւ նորա ապստարեալ զանձն եւ ըզմնացեալս ամենապահ շնորհացն Աստուծոյ»⁶¹:

Այսքան մանրամասնութիւններու մէջ՝ կարծես Կորիւն մոռցած է յիշելու Սահակ-

կի մահուան օրուան պատկերը, որ սակայն կարեւոր պարագայ մըն էր թէ՛ ժամանակակիցներու համար եւ թէ՛ մանաւանդ մեզի. քանի որ անոր հիման վրայ կարելի էր անվիճելի ճշտութեամբ ստուգել մահուան բուն թուականը: Այնուհանդերձ, Սոփերքի մէջ հրատարակուած Սահակի վարքը կը յիշէ թէ ատիկա պատահած է հինգշաբթի օր մը⁶²: Այս վկայութեան հիման վրայ, Փրանսացի տոմարագետ՝ Տիւրրիէ ճշտած է թէ Սահակի մահուան ստոյգ թուականը պէտք է ըլլայ 439ի Նաւասարդ 30ը, որ է Սեպտեմբեր 7, ինչ որ հինգշաբթի մը կը հանդիպի⁶³: Այս մասին աւելի երկար պիտի խօսինք յետոյ:

Երկրորդ մանրամասնութիւն մըն ալ պիտի ըլլար Սահակի տարիքը, զոր յիշած է Կորիւն: Յետագայ պատմիչներ անոր կը վերագրեն չափազանցուած տարիք մը. այսպէս, Թովմաս Արծրունի՝ հարիւր քսան տարի կու տայ. «Կեցեալ, կը գրէ ան, սուրբն Սահակ ամս հարիւր քսան՝ փոխի աշխարհէս»⁶⁴: Իսկ «Տիե-

61. ԿՈՐԻՒՆ, Վ. Մ., էջ 86/8:

62. Պատմութիւն վարդապետ Ս. Սահակայ Հայրապետի, Վանեակ, 1853, Սոփերք Հայկականք, Բ, էջ 35:

63. DULAURIER, «Recherches sur la chronologie arménienne», Paris, 1852, p. 135, n. 39.

64. ԹՈՎՄԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ, Պատմութիւն տանն Արծրունեաց, Կ. Պոլիս, 1852, էջ 81: